



## ՀԵՌՈՒՍՏՍԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

22 հունվարի 2019 թվականի թիվ 3-Ա

ք. Երևան

#### «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով իր կողմից կազմված 2018 թվականի դեկտեմբերի 10-ին հարուցված թիվ 5 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը 2018 թվականի դեկտեմբերի 10-ին «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊԸ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով «Առաջին այլք» հեռուստադրագրի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 9-ին, ժամը՝ 22:40-ին եթեր հեռարձակված «ԱԺ արտահերթ ընտրություններ» հաղորդման ընթացքում Ռուբեն Մելիքյանի հայտարարությունը:

Ընկերության եթերում (FM 104.1) 2018 թվականի դեկտեմբերի 8-ին՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության նախորդող օրը, ժամը՝ 14:03-ին «Հայեցակետ» հաղորդման ընթացքում հեռարձակվել է քարոզչական նյութ՝ խախտելով «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը՝ այն է, ընտրությունների մասին ՀՀ օրենսդրությամբ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում քարոզչական բնույթի հաղորդում է հեռարձակել:

Հանձնաժողովը 2018 թվականի դեկտեմբերի 11-ին հարուցված վարչական վարույթի մասին տեղեկացրել է Ընկերությանը և հայտնել, որ այդ հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել բացատրություններ, միջնորդություններ:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Ընկերությունը ներկայացրել է իր բացատրությունը, համաձայն որի՝ Ընկերությունը գովազդային ծառայություններ է տրամադրել քաղաքական ուժերին, ինչպես նաև լուսաբանել է ընտրարշավը իր լրատվական և հրապարակախոսական հաղորդումների ընթացքում: Ընտրությանը մասնակցող ուժերին նաև տրվել է հնարավորություն հանդես գալ եթերում, «Հայեցակետ» հաղորդաշարի շրջանակներում: Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ կուսակցության ՔԺՎԿ ներկայացուցիչը հրավիրվել է «Հայեցակետ» հաղորդման

դեկտեմբերի 6-ի եթերին, սակայն այդ օրը հրաժարվել են գալ եթեր և հաջորդ օրը դիմել են եթեր տրամադրելու խնդրանքով: Ձայնագրումը կայացել է դեկտեմբերի 7-ի առավոտյան և եթեր հեռարձակվել նույն օրը ժամը՝ 14:05-ին: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 8-ին, օրենքի պահանջներին համաձայն, Ընկերությունը չի նախատեսել ընտրական քարոզչություն պարունակող նյութերի հրապարակում, սակայն 2018 թվականի դեկտեմբերի 8-ին, ժամը՝ 14:00-ին ռադիոկայանի հեռարձակման կենտրոնում տեղի է ունեցել Էլեկտրաէներգիայի խափանում, ինչի հետևանքով եթերի ավտոմատ կառավարում իրականացնող համակարգչային ծրագիրը անցել է եթերի հեռարձակման ժամանակավոր ռեժիմին և լռելայնությամբ ընտրել է նախորդ օրվա այդ ժամանակահատվածի ծրագիրը: Էլեկտրասնուցման վերականգնվելուց հետո ծրագիրը ընթացել է ըստ նախատեսվածի:

«ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այդ ժամանակահատվածում քարոզչությունը ստորև անվանվում է նախընտրական քարոզչություն:

Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով արգելվում է:»:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «2. Ընտրությունների (հանրաքվեների) քվեարկության օրը և դրան նախորդող օրն արգելվում է հեռարձակել քարոզչական նյութ՝ տեղեկատվական, խմբագրական, փաստավավերագրական, հեղինակային կամ այլ հաղորդումների տեսքով կամ ցանկացած այլ ձևով նախընտրական (հանրաքվեի նախապատրաստական) քարոզչություն իրականացնել:»:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է. «7. Ընտրությունների և հանրաքվեների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քարոզչության համար արգելված ժամանակահատվածում քարոզչական բնույթի հաղորդում հեռարձակելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:»:

22.01.2019թ-ին կայանալիք նիստի մասին պատշաճ ծանուցվել է Ընկերությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 58-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 7-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՌԱԴԻՈ ՀԱՅ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Գ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ**

22 հունվարի 2019թ.

ք. Երևան